» Մէյսարի անկանի արեւմտեան կողմն Զամախուոյ եօթն վէրստ հեռաւորութիւնով, ունի քառասուն Հայազգի գերդաստուն, որք պարապում են վարուցանիւ և այգեգործութեամբ։

» Արեւմտեան կողմն այս գիւղի ձորագլխի վրայ շինած կ"ոյ վանք՝ որ ասվում է հասարակ անունով Մէյսարու վանք։ Զամախու վիճակի հոգեւոր արդեանց պակասութեան և ժողովրդեան աղքատիկ դրութեան համար ի ցաւ սրտի տեսողաց ամայացած է և քայքայված՝ շատ տեղ շարժից։ Այս վանքն յառաջ ժամանակաւ ունեցած է բաւական վարդապետ միաբան, ինչպէս երեւում է խցերի աւերակներից և գերեզմանատանից[1])։

» Ունեցել է երկու պատուական աղբիւր, մին սարից բերած ագուկայիւ վանքի բակի մէջ, միւսն բնակչաց համար և վանքապատկան և գիւղապատկան անասնոց ջրելու համար՝ արեւմտեան կողմն ձորամէջ շինած սապէս ասեն տեղւոյն վանահայր Գալուստ վարդապետի աշխատութիւնովն։

» Այս վանքն նոյնպէս և սուրբ Ստեփաննոսի Սաղիանու վանքն մինչեւ ի հաստատութիւնն հոգեւոր ատենին ի Զամախի՝ չէն են եղած՝ և՝ լի բաւական միաբանութիւնով։ (Լսեցէ՛ք)։

Անհոգութիւնով շատ վարելահողեր սեպհականել են իրանց՝ տեղւոյն բնակիչները, և վանքերը ձգել են նեղ և անձուկ դրութեան մէջ։

Ցաւալին այս է՝ որ ոչ քաղաքում և ոչ գիւղօրայքում չկան եռանդոտ և ազգասէր անձինք, որ ինձ օգնութիւն անեն, և շատ դժուարութիւնով հասկանում են առաջադրութիւններն իրանց ապագայ վիճակի և իրանց զաւակաց բարօրութեան համար։

» Շատ մխիթարական կը լինէր ինձ՝ եթէ գոնէ մի երկու երեք ուսումնական երիտասարդներ գտանվէին Զամախում ինձ օգնական լինելու համար ազգային գործերումն։

» Միայն եմ. բայց՝ վայ միոյն՝ եթէ գլորիցէ, և ով է որ կանգնեսցէ զնա »։

---

[1]) 1851 թուէն վերջացած է Մէյսարու վանքի միաբանութիւնն՝ ինչպէս պատմեցին Մէյսարեցիք և Զամախեցիք։